

այսահարը (Մանդ. 193), ոչ թէ ուրիշներ անոր փոխան:

13. — Սգաւորք: — Սիրելեաց մահուան կամ կորստեան ցաւով ընկճուած սրտերու եւս յատուկ էր՝ մերժել փափուկ կերակրները. ոչ միայն ի սկզբան՝ երբ բնութիւնն ինքնին կը խորշէր անոցմէ, այլ յետոյ եւս կամաւորապէս շարունակելով նոյն զրկումը սգոյ ամբողջ շրջանին մէջ: Երազումն հին է. Սաւուղի մահուան առթիւ Հրեայք եօթն օր պահեցին եւ Դաւիթ օր մը (Թագ. Ա, 1Ա, 13. Բ, Ա, 12): Իսկ Յուդիթ (Ը, 6) եւ Աննա մարգարէն (Ղկ. Բ, 37) իրենց ամբողջ այրութիւնը պահօք անցուցին: Նոյնպէս էր մեր քով ալ: Եղիշէի տիկնայք, որոցմէ ոմանց ամուսինք ընկած էին պատերազմին մէջ եւ ոմանցն աքսորուած, կէս մը կարօտութեան պատճառաւ եւ կէս մ'ալ կամաւ՝ « իբրև այրիք սգաւորք՝ » (Եղիշ. 176) հրաժարած ապրեցան իրենց ճաշի սպասաւորներէն, գեղեցիկ սպասներէն, լուացումներէն, օծումներէն եւ ազնիւ հանդերձներէն: անոնց տաճարները բարձիթողի խանգարեցան. եւ իրենց սնունդն էր կորեկահատ, բանջարեղէն ու ջուր միայն (նոյն, 173-4. Փրպ. 331-2): Կէս մը կամաւոր ըսի զայս. եւ արդարեւ երկար